



ՌԵԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵԾԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՆՈՅԵՄԲԵՐ

ՆՇՄԱՐՔ ԵՒ ՆՇԽԱՐՔ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես էրես 289)

ԻԱ. Բոլոր այս վիճակաց և շինից
գաւառիս թագաւորն է Կարս բերդա-
քաղաքն, որ ամրութեամբն հռչակուած
է յարեւելք և Օսմանեանց ամրագոյն
բերդն է մեր աշխարհին մէջ. հին շի-
նութեան ժամանակն և հեղինակն յայտ-
նի չէ, թուի թէ Կարք անուն ցեղի մը
գլխաւորէ շինուած է, թէ և վերք Կա-
րիս-քաղաքի անուանելով՝ Դրան-քա-
ղաք կը թարգմանեն: Ով ալ ըլլայ շի-
նողն՝ շատ փորձ և բաղդաւոր աչք ունի
եղեր. վասն զի աղէկ կշռած և ընտրած
է տեղը, ՚ի բնէ իսկ ամուր. Մեծագե-
տոյն արմրկան մէջ երեք կողմէն պա-
տուած, իբր 5600' բարձր ծովու երե-
սէն. գետոյն եզերքն ալ յատակէն շատ
բարձր և զառ ՚ի վայր ըլլալով՝ չեն թո-
ղուր մօտենալ քաղքին. իսկ չորրորդ
(արեւելեան) կողմէն պարիսպներով և
մարտկոցներով ամրացած է, նոյնպէս

մօտի բլուրներն ալ բերդիկներով ամ-
րացեալ են: Երկայնածև քառակուսի
է բերդաքաղաքն, իբրև հազար բնաչափ
երկայն, կիսով չափ լայն. երկու պա-
րիսպ ունի 5-6 ոտք թանձրութեամբ
և 15' բարձրութեամբ, հրաբղխեայ քա-
րերով շինուած, քառակուսի աշտա-
րակներով պատսպարած, որոց 17 հատն
են հարաւակողմէն, 9 հատ արեւմուտ-
քէն, իւրաքանչիւրն ալ 10 բնաչափ
լայնութեամբ. անկիւններուն և դրանց
քով կանգնած են մեծագոյն աշտա-
րակներ, որոց վրայ կ'երևան մեր նախ-
նի իշխողաց արձանագրութիւնքն և
խաչարձանք. բայց ես ժի գարէ հին
արձանագիր չտեսայ: Քաղքին արեւմը-
տեան հիւսիսային անկիւնը բռնած է
միջնաբերդն, բարձր և անկոխելի քա-
րածայռի վրայ, որ առանց հրանօթի
ռմբաձգութեան անառիկ է. մանա-

ւանդ որ չորս կողմն ալ ուրիշ անկոխելի ժայռեր և գետոյն անդունդներն կան . որոց վրայ երեք ամուր քարաշէն կա . ամուրջը ձգուած են , և մէկն հին է . քաղ-քէն հեռուն ալ ուրիշ կամուրջներ կան , մէկն ալ շինեց վերջի (1854-5) պա-տերազմին ատեն անգղիացի զօրավար մը (Lake) : Բերդին հարաւային և արեւելեան կողմը լայն խրամ մը կը պատի . մէկ կողմն ալ բոլորակ աշտարակի նման շինուած մը կայ , որ գերեզմանի տեղ կարծուի : Երեք կողմէ քաղաքն արուարձաններ ունի . Օրթա-քափու՝ ՚ի հարաւոյ , Պէյրաս-փաշա՝ արեւելքէն , Սու-գափու՝ արեւմուտքէն , գետոյն անդիի կողմը . այս ետքինս է Հայոց թաղ :

Վերջի պատերազմէն շատ փնասուեցան կարսայ շէնքերն , որոց զխաւորը սեպուէին՝ միջնաբերդին մէջ մզկիթն , զինուորանոցն , վառօդարանն , ծածկուած ճւամպուլայն (ջրամբար) 300 քարակտուր սանդղոց սատիճաններով մինչև ՚ի գետն , և բերդապահին բնակարանն : Ռուսաց առաջին անգամ առնելէն առաջ 17 թաղ կը բաժնուէր Կարս , ամենն ալ մէկմէկ մզկիթ ունէին , 850 տուն կար , 126 խանութ , 2 բաղնիք , 1 եկեղեցի Հայոց , 1 կարաւանատուն . հարաւային և արեւելեան արուարձանաց մէջ ալ 11 թաղ կար թուրքաց և թաթարաց , իրենց մզկիթներով , 1 եկեղեցի , 4 կարաւանատուն , 430 խանութ , 800 տուն . իսկ Հայոց թաղն ունէր 600 տուն , 2 բաղնիք , շատ գործարաններ , ներկարաններ , աղօրիք , շուհակք , և այլն : Տուններն ընդհանրապէս հողաշէն են , քառակուսի , և կրկնայարկ :

Սմենէն նշանաւոր շէնքն է զխաւոր մզկիթն , որ էր Հայոց մայր եկեղեցին , հիմնած յամին 930 , Ա Աբաս թագաւորէն , և աւարտած 942^ն . որուն ձևն ալ նիւթն ալ արդէն շինութեան ժամանակակիցը շատ գոված են , ինչպէս կ'ըսէ մէկն .¹ « վիմարդեան արձանօք որձաքար պողովատաշ վիմօք , բոլորապէս

գմբեթաւորեալ , պայծառ զարդուք , երկնանման խորան » . յիրաւի վայելուչ և անսովոր ձև մ'ունի , զըրսէն ութանկիւնի բոլորակ , ներսէն քառաթեւ . գմբէթն բարձր և սրածայր՝ ութ կողմերէն կը վերանայ առանց սեան , 12 երես բաժնուած , որոց վրայ ներսէն 12 առաքելոց պատկերքն նկարած են , անոր համար Առաքելոց եկեղեցի ալ կոչուած է : Այս եկեղեցւոյս համար է որ Ափխազաց թագաւորն Բեր կամ Թեւդաս (Թէոդոս) նախատանօք դեսպան խաւրեց առ Աբաս՝ որ նաւակատիքը չընէ ինչուան որ ինքն գայ իրեն ծխովը օրհնել տայ . սա ալ յարձրկելով Բերայ զօրաց վրայ՝ որ կուր գետոյն եզերքը բանակեր էին , վանեց վռնտեց , և թագաւորնին բռնելով բերաւ՝ ցուցընել տուաւ իր շինած եկեղեցւոյն վայելչութիւնը , լաւ տես , ըսելով , վասն զի մէկ մ'ալ պիտի չտեսնես . և աչքերը խաւարցընելով՝ զլիսուն գինը առաւ ու արձրկեց : Այս եկեղեցիէս զատ երկու երեք հատ ալ յայտնի հին եկեղեցիներ կան ՚ի մզկիթ փոխուած . քանի մ'ալ ուրիշ հին շէնքեր բոլորովին աւերուելու մօտ . մզկիթի մը մէջ ալ նահատակի գերեզման մը կը ցուցընեն : Իսկ հիմաւուան Հայոց եկեղեցին արուարձանին մէջ է բարձր տեղ մը :

Դար մը Բագրատունի թագաւորաց աթոռ եղող քաղաքն՝ պէտք էր որ Անոյ պէս շատ ձեռակերտ յիշատակարաններ ունենար . բայց իր վիճակն աւելի պատերազմական եղաւ . կըրնայ ըսուիլ թէ իբրեւ սպառազինեալ ծնաւ Կարս , և այնպէս մնաց հազար տարի ու կը մնայ մինչև այսօր , շատ պատերազմներէ անցնելով : Նախ Ա Աշոտոյ եղբայրն Աբաս թագաւորն վերջերն՝ ամրացուց զԿարս և ինքնագլուխ թագաւորնստաւ . իր եղբորորդին նահատակն Սմբատ Ա , հոս ապահովեց իր արքունիքը և տիկնայքը՝ Ափշնի արշաւանաց ատեն . բայց երբ սա պաշարմամբ նեղեց բերդը , բերդապահն անձնատուր եղաւ , Ափշին յափշտակեց գանձերը , տիկնայքը վաճառեց Սմբատայ . ասոր որդին Աբաս Ա

1 Ասողիկ :

նորէն ամրացուց և թագաւորեց ի կարս, նոյնպէս իր որդին ալ Մուշեղ հոս թագաւորեց, մինչ անոր երէց եղբայրն Աշոտ Ողորմած՝ Բագրատունեաց բուն աթոռը դրաւ յԱնի. յետ (24 տարւոյ) Մուշեղայ թագաւորեց իր որդին Աբաս Բ 45 տարի. ասոր ալ յաջորդեց որդին Գագիկ՝ 35 տարի. որ Անի քաղքին Յունաց ձեռքը մատնուելէն վերջը 20 տարի ալ նստաւ հոս. սակայն նոր և աւելի զօրաւոր թշնամեաց ձեռքէն ազատ չի մնաց. Սելջուկ թուրքաց ասպատակքն՝ յամին 1053՝ յանկարծօրէն յարձրկեցան կարսայ վրայ, իրենց չար սովորութեամբ՝ Աստուածայայտնութեան տօնից օրերը, և անպատրաստ գտնելով կողոպտեցին քաղաքը՝ որ հարբստութեամբ լցուած էր « ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ » . չէնքերը այրեցին, մնացեալ բնակիչքը ջարդեցին. վասն զի մէկ մասը միջնաբերդը փախաւ և ազատեցաւ : Տուղրիլ Սուլտան աւարին համառած՝ նորէն ասպատակ խաւրեց կարսայ վրայ՝ Արսուրան զօրավարին առաջ նորդութեամբ. այս անգամ Գագիկ անպատրաստ չէր. դէմ խաւրեց իր զօրքերը, որ մեծ ջարդ ըրին թշնամեաց մէջ. բայց յանդրգնօրէն ներս նետուելով 30 հոգի իրենց ազնուականներէն սպանուեցան, մէկն ալ թաթուլ անուն՝ « այր հզօր և պատերազմասէր » բռնուեցաւ. բերին Սուլտանին առջև. զարմացաւ սա կտորճին կերպարանաց և անվախութեանը վրայ, և խոստացաւ անմիասն արձրկելու՝ եթէ իր զօրավարին խոցուած որդին բժշկուելու ըլլար. — « Թէ իմ է զարկածն, ըսաւ թաթուլ, չէ կենաց. թէ այլում է՝ զայն ոչ գիտեմ » . (Եթէ իմ ձեռքէս զարնուած է Արսուրայ որդին՝ անկարելի է որ ապրի, իսկ եթէ ուրիշ մ'է զարկողն՝ այն չեմ գիտեր) : Ըսածն ստուգուեցաւ. երիտասարդն մեռաւ. թաթուլ ի մահ մատնեցաւ. բայց Տուղրիլ անոր աջ բազուկը կտրելով՝ խաւրեց մխիթարանք Արսուրանայ, « Թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին » : Արժանի գովեստ արժանաւոր քաջին : — Տուղրի-

լայ յաջորդն էլ Կի Արսլան առաւ զԱնի. կարգն եկաւ կարսայ. դեսպան խաւրեց Գագիկայ որ անձնատուր ըլլայ. գիտէր սա որ կարելի չէ երկար ատեն այն ահեղ աղեղնաւորաց դէմ կենալ, և թաթուլայ անվրէպ բազուկներն միշտ չեն բուսնիր. ճարտարութեամբ բռնաւորին սիրտը որսաց. պալատան ներքնատունը նստաւ սգազգեստ՝ դեսպանին եկած ատեն, կարծեցընելով որ Տուղրիլի մահուան վրայ է սուգն. հաւատաց զթագաւ Ասլան, և խաղաղութեամբ եկաւ ի կարս. Գագիկ մեծ հանգիսիւ ընդունեցաւ զնա և կերակրեց բոլոր բանակովը, մէկ անգամուն ինչուան 100,000 դահեկան (սակի) ծախս ընելով, և յետ դարձուց աշխարհաւերը : Բայց չուզելով որ անգամ մ'ալ փորձանքի ընկնի, Յունաց վաճառեց իր քաղաքն ալ դաւառն ալ, և փոխարէն առաւ կապադովկիոյ մէջ երկիր մը : — 20 տարի վերջը (1084) Յոյնք ալ վրաց ծախեցին զկարս. ասոնցմէ առին թուրքք և պահեցին մինչև ԺԳ դարուն սկիզբը, յորում (1208ն) Զաքարէ և Իւանէ առին զկարս վրաց և Հայոց զօրք. բայց 30 տարի վերջը (1239) Թաթարք Անին առնըլէն ետեւ եկան ի կարս, և թէպէտ զաշնադրութեամբ առին, բայց կողոպտեցին հանդերձ արիւնհեղութեամբ. — 15 տարի վերջը հոս կը նստէր իրենց մեծ զօրավարն Բաչի-Նուին, երբ Ա Հեթում թագաւորն կիւլիկիոյ եկաւ իրեն այցելութեան՝ ի թաթարստան երթալու ատեն : Թաթարաց և թուրքաց ձեռքը մնաց կարս անաւեր՝ իր ամբութեամբը, նաև լէնկթիմուրի ատեն (1394), որ պաշարմամբ չկրցաւ առնուլ, այլ պայմանաւ անձնատուր ըրաւ անորբերդապահը (Ֆիրուզպախթ) : Անկէ ետեւ ԺԵ դարուն մէջ թուրքաց և վրաց կռուոյ կէտ մ'եղաւ կարս, ինչպէս ետեւի դարերուն մէջ ալ Օսմանեանց և Պարսից. ասոնք շատ անգամ պաշարեցին, նաև իրենց մեծ և յաղթող թագաւորաց ատեն, ինչպէս Շահաբաս (1603), Թահմազ Դուլի (1735) բայց չկրցան առնուլ. և ոչ ալ Ռուսք

1807^և. բայց 1828 պատերազմին ա-
տեն Բասթիլ իրեք օր պաշարելով, և
արևելեան հարաւային կողմը տկար
դռնելով ու անկէ յարձըկելով՝ ստիպեց
զՕսմանեանս անձնատուր ըլլալու (23
յունիսի). և երբ քանի մ'ամիս ետքը
Աղբիւնուպօլսոյ դաշնադրութեամբ նո-
րէն Օսմանեանց թողուցին զկարս, կ'ը-
սեն թէ Բասթիլ լացած ըլլայ: Բայց
Ռուսք ելլելու ատեննին՝ ոչ միայն շատ
բան վերուցին քաղքէն, այլ և ամբու-
թեանց մէկ մասը քակեցին. անոր հա-
մար վերջի նոր պատերազմին ատեն
(1854-5) Անգղիացի փաշայն Ռիլիէմս
նորէն ամրացուց, չորս կողմն ալ մարտ
կոցներ կանգնեց, որով վեց ամիս դի-
մացաւ Ռուսաց շատ անգամ յարձակ-
մանցը, որք անգամ մը 7000 մարդ կո-
րուսին անոր պարսպաց տակ. և վեր-
ջապէս սովով նեղելով առին (28 նո-
յեմբ.) և երբ նորէն թողուցին Օսմա-
նեանց (7 օգոստոսի, 1856) ամրոցները
աւրըշտըկեցին, թուրքաց արձանագիր
քարերը քակեցին՝ Կարսայ հակառա-
կորդ կիւմրի բերդին հագուցին: Գե-
տինը փորելու ատենն ալ հողէ աման
մը գտան՝ վրաց Ռուսուդան թագուհւոյ
պղնձի դրամներով. այս թագուհւոյս ա-
տեն (Յ. Գ. դար) պարսպաց նորոգուելուն
վկայ է ինչուան հիմայ աշտարակի մը
վրայ մնացած հայերէն արձանագիրն.
« Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ
թագաւորին մերոյ Բուսուդանայ՝ մեք
կարուց քրիստոնեայքս մեծ և փոքր՝
շինեցաք զբրջներս, 'ի յիշատակ մեզ և
պատրոնին մերոյ »:

Կը շարունակուի:

ԻՄ ՎԱՆՔՍ

Դրաքեանի մը սևտիպ յիշատակա-
գիրք:

(Տես էրես 292)

ԺԶ.

Առաւօտ մը, ժամերգութենէն և մը-
տուորական աղօթքէն ետե, արբան

կանչեց զիս իր բնակութեան սենեակը.
և սովորականէն աւելի քաղցրութեամբ՝
իրբե ճշմարիտ հայր խօսեցաւ հետս, և
ջանաց ամենայն կերպով իմ վիշտս
մեղմելու և վհատեալ սրտիս քիչ մը
հանդարտութիւն ազդելու: Ըսաւ որ
եռանդեամբ աղաչեմ Աստուծոյ, և թէ
բոլոր եղբայրակիցքս կ'օգնեն իմ աղօ-
թիցս, ինծի համար մասնաւոր աղօթք-
ներ ապսպրելով իրենց: Եւ իմ յան-
ցանացս համար Աստուծոյ արդարապէս
զայրացած բարկութիւնն իջեցնելու
պատճառաւ, վասն սրբոյ հնազանդու-
թեան կը հրամայէր ինծի՝ որ մենաստա-
նին դրան քով կենամ և փայտ սղոցեմ:

Ես ծունր դրի, և արբան խանդաղա-
տեալ՝ վերուց աջը և մեր փրկագործու-
թեան նշանաւ կնքեց զիս:

Մկսայ կամաց կամաց դէպ 'ի դուռը
երթալ, և գնացի դռնապան եղբօրը քով,
որ արդէն կարեւոր տեղեկութիւններն ա-
ռեր էր արբայէն: Արդէն մուտքին դրան
քով բարձր փայտակոյտ մը ձեացուած
էր, և սղոցն ալ պատրաստ:

Բաւական հանդարտութեամբ այս
աշխատութիւնն սկսայ: Եւ ահա քիչ
ժամ վերջը հիւրընկալ հայրը ինծի եկաւ:
Ասիկայ այն խորհրդաւոր միանձն էր, որ
այնչափ անգամ խոր տալաւորութիւն
մը ըրեր էր վրաս: Ես նորէն աշխատու-
թիւնս ձեռքս առի: Իսկ ինքը անշարժ
կեցեր էր, թեքելով կուրծքին վրայ ամ-
փոփած, և ինչպէս որ կ'երևար՝ ծանր
մտածութեանց մէջ ընկղմած: Խօստա-
գոյն լուութեան պարտաւորութենէն ըս-
տիպուած՝ երկուքս ալ համերգ կամ
արձաններու պէս կեցանք: Արևը մըտ-
նելու մօտ էր. մենաստանին զանգակն
միանձուները դասի կը կանչէր: Այն ձայ-
նին՝ ընկերս կարծես թէ ցնցուեցաւ. և
տկար ու դողդոջուն ձայնով մը կանչեց
զիս՝ ըսելով. եղբայր:

Ես աչքս վերուցի, զարմանքով մը
նայելով իրեն՝ որ առանց արբային հրա-
մանին խօսել յանդգներ էր: Ինքն իմա-
ցաւ այն նայեալքին նշանակութիւնը,
և չթմանցը վերայ թեթե ծիծաղ մը
շարժելով՝ ըսաւ. Մեր սրբակաց արբայն